



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)  
N 8 (9) 2009թ. հունիսի 21- հուլիսի 20

14 օգոստոսի, 2009թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ .....	16
1.1 Օրենքներ .....	16
1.2 ՀՀ կառավարության որոշումներ .....	18
1.3 ՀՀ Ազգային ժողովի որոշումներ .....	18
1.4 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ .....	18
3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ .....	20
3.1 Կառուցվածք և գործառույթներ .....	20
3.2 Ծրագրեր և կատարողականություն .....	20
3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների .....	22
3.4 Միջազգային համագործակցություն .....	22
3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում .....	23
3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն .....	23
3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր .....	24
3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր .....	24
3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր .....	25

## 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

### 1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	8 հունիսի, 2009 թ., ՀՕ-138-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (699)
Ուժի մեջ է	02/07/2009թ.

#### Համառոտ նկարագիր

Օրենքի 7-րդ հոդվածի 14-րդ կետի փոփոխությամբ Հայաստանյան Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիների կողմից ծառայության ավարտից հետո առանց ԱԱՀ-ի վճարման կարող են ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը:

Փաստաթուղթ	«ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	8 հունիսի, 2009 թ., ՀՕ-139-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (699)
Ուժի մեջ է	02/07/2009թ.

#### Համառոտ նկարագիր

Օրենսգրքի 105-րդ հոդվածի 6.1-րդ կետի փոփոխությամբ օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետները և ՀՀ դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդները, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիները ծառայության ավարտից հետո առանց մաքսատուրքի վճարման կարող են ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	11 հունիսի, 2009 թ., ՀՕ-154-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (700)
Ուժի մեջ է	09/07/2009թ.

#### Համառոտ նկարագիր

Օրենքում ավելացվել է նոր 34.1 հոդված, համաձայն որի՝ ՀՀ տարածքում գործող ֆոնդային բոր սա-յում ցուցակվելու դեպքում, ցուցակված ընկերությանը օրենքով սահմանված ծառայությունների մասով ՀՀ կառավարության սահմանված կարգով տրվում է փոխհատուցում այդ ծառայությունների համար վճարված ԱԱՀ-ի գումարների չափով: Սահմանվել է նաև այն ծառայությունների ցանկը, որոնց մասով տրվում է փոխհատուցում:

Օրենքի 26-րդ հոդվածը լրացվել է նոր 6-րդ կետով, որով սահմանվել է 34.1 հոդվածով նախատեսված փոխհատուցման գումարների ԱԱՀ-ի վերաձևակերպման և հաշվանցման կարգը:

Օրենքի 33-րդ հոդվածը լրացվել է նոր պարբերությունով, որով սահմանվել է ԱԱՀ վճարողների կող-մից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերը ՀՀ տարածքում գործող ֆոնդային և բորսայում ցուցակվելու դեպքում ԱԱՀ-ի ճշտված հաշվարկների ներկայացման կարգը:

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին » ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	11 հունիսի, 2009 թ., ՀՕ-152-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (700)
Ուժի մեջ է	01/08/2009թ.

**Համառոտ նկարագիր**

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները վերաբերվում են ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությանը:

2009թ. օգոստոսի 1-ից սկսած ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է՝ ամսվա ընթացքում իրացված գազի ընդհանուր ծավալի նկատմամբ մեկ մետր խորանարդ գազի հաշվով 20 դրամ հաշվարկային դրույքաչափ կիրառելով: Հաշվարկային դրույքաչափով հաստատագրված վճարի հաշվարկման համար ամսվա ընթացքում իրացված գազի ծավալը չի կարող պակաս լինել ամսվա ընթացքում ստացված գազի ծավալի 87.5 տոկոսից: Ստացված գազի ծավալը չափող հաշվիչ հանգույցի տվյալները հարկային մարմնի պաշտոնատար անձը կարող է վերցնել գազալցման կայանի աշխատանքային ժամերին և հաշվիչի վրա դնել դրոշմակնիք:

Սահմանվել է հաստատագրված վճարի նվազագույն չափ յուրաքանչյուր գազալցման կայանի համար: Գազալցման կայանի գտնվելու վայրի հետ կապված հաստատագրված վճարի նվազագույն ամսական չափը չի կարող պակաս լինել՝ Երևան քաղաքում՝ 1 500 000 դրամից, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի մարզերում՝ 1 125 000 դրամից, այլ վայրերում՝ 900 000 դրամից:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվել է նաև ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության վերաբերյալ տեղեկությունների չներկայացման համար պատասխանատվության կիրառումը:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	11 հունիսի, 2009 թ., ՀՕ-153-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (700)
Ուժի մեջ է	09/07/2009թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքում կատարված 8-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն եկամուտ չեն համարվում իր կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆոնդային բորսայում ցուցակված ռեզիդենտ ընկերությունների կողմից ստացման ենթակա՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված փոխհատուցման գումարները:

Օրենքը լրացվել է նոր 39.2-րդ հոդվածով, համաձայն որի մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսայում օրենքով սահմանված կարգով հասարակ անվանական բաժնետոմսեր ցուցակված և նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված պահանջները բավարարող ռեզիդենտ ընկերությունները (բացառությամբ պե տուրյան կողմից կարգավորվող սակագներ կիրառող ռեզիդենտների) նույն հոդվածով սահմանված կարգով և ժամ կետներում օգտվում են հաշվետու տարիների շահութահարկը 50 տոկոսով, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր տարվա համար 300 մլն դրամով նվազեցնելու արտոնությունից: Նույն հոդվածով սահմանվել է, որ ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսայի կողմից, ՀՀ կառավարության սահմանած կարգով, մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ են ներկայացվում տեղեկություններ՝ ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսայում հասարակ անվանական բաժնետոմսեր ցուցակված ռեզիդենտ ընկերությունների վերաբերյալ:

Սահմանվել է նաև նշված դրույթների կիրառման ժամկետները և հաշվառման առանձնահատկությունները:

Փաստաթուղթ	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	11 հունիսի, 2009թ., N157-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №35(701)
Ուժի մեջ է	1 հունվարի, 2010թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքի 1-ին հոդվածում կատարված փոփոխության համաձայն 2010 թվականից «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ների և «Գեոպրոմայնինգ Գուլդ» ՍՊԸ-ի կողմից վճարվող բնապահպանական վճարներից ևս մասհանումներ կկատարվեն և առանձին տողով կարտա-

ցովեն այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն: 2010 թվականից կատարվող մասհանումները կմուտքագրվեն ոչ միայն վարչական, այլ նաև ֆոնդային բյուջեներ: Սահմանվել են այն բնապահպանական վճարների տեսակները, որոնցից կատարվելու են մասհանումներ: Փոփոխվել են նաև բնապահպանական վճարներից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերին վերաբերող դրույթները:

**1.2 ՀՀ կառավարության որոշումներ**

Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2003 թվականի ԿՁ»Այմ»ՈՇ 21-ի N 1779-Ս որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29 մայիսի, 2009թ, N636-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°32(698), 24.06.2009թ.
Ուժի մեջ է	25 հունիսի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշման ընդունմամբ կրճատվել է ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների ներմուծման և արտահանման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը: Սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մաքսային սահմանով առանձին ապրանքների տեղափոխման դեպքում կարող են պահանջվել այլ փաստաթղթեր, մասնավորապես, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխման դեպքում՝ ոչ սակագնային կարգավորման նպատակով պահանջվող փաստաթղթերի բնօրինակները՝ թույլտվություն, եզրակացություն, լիցենզիա, վկայագիր, հավաստագիր:

**1.3 ՀՀ Ազգային ժողովի որոշումներ**

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին» 1995 թվականի ապրիլի 10-ին Սոֆիայում ստորագրված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշում
Ամսաթիվը և համարը	11 հունիսի, 2009թ, NՆ-151-4
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°33(699), 01.07.2009թ.

**Համառոտ նկարագիր**

Վավերացվել է 2008 թվականի դեկտեմբերի 10-ին Սոֆիայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին» 1995 թվականի ապրիլի 10-ին Սոֆիայում ստորագրված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը:

Այս համաձայնագրի դրույթները կիրառվում են 1996 թվականի հունվարի 1 -ից և մի շարք դրույթների արդիականությունը կորցնելը հիմք է հանդիսացել համաձայնագրում փոփոխություններ կատարելու համար: Մասնավորապես փոփոխվել են դրույթների «Շահաբաժիններ», «Տոկոսներ», «Ռոյալթի», «Գույքի ինքնաճր», «Կենսաթոշակներ», «Այլ եկամուտներ», ինչպես նաև «Տեղեկությունների փոխանակում» հոդվածները:

**1.4 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ**

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1998 թվականի հուլիսի 28-ի N01/42 հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	4 հունիսի, 2009թ, N1353-Ն

Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 21 (339), 01.07.2009թ.
--------------	--

Ուժի մեջ է	11 հուլիսի, 2009թ.
------------	--------------------

**Համառոտ նկարագիր**

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 11-րդ հոդվածի 1-ին մասերին համապատասխան փոփոխություններ են կատարվել վերը նշված հրամանում, ըստ որի ուժը կորցրած են ճանաչվել «Լուսանկարչական լաբորատորիաների միջոցով իրականացվող գործունեության համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ» և «Տեսաժապավենների և տեսամագնիստֆոնների վարձույթի համար հաստատագրված վճարների հաշվարկման ուղղիչ գործակցի վերաբերյալ» հայտարարությունների ձևերը, սահմանվել է հյուրանոցային տնտեսության օբյեկտի գործունեության համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության ձևն ու լրաց մանկարգը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթների վերաբերյալ հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1998 թվականի մարտի 3-ի N 01/15 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
------------	--

Ամսաթիվը և համարը	16 մարտի, 2009թ, N498-Ն
-------------------	-------------------------

Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 20 (338), 19.06.2009թ.
--------------	--

Ուժի մեջ է	29 հունիսի, 2009թ.
------------	--------------------

**Համառոտ նկարագիր**

Հաստատվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար օգտագործվող թունաքիմիկատները, պարարտանյութերը, գյուղատնտեսական մշակաբույսերը և բազմամյա տնկարկների սերմացուները և տնկանյութը գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին իրացման հետ կապված հարկային արտոնությունների կիրառման հարցերը, մասնավորապես. որոնք են համարվում ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար օգտագործվող թունաքիմիկատներ, պարարտանյութեր, գյուղատնտեսական մշակաբույսեր և բազմամյա տնկարկների սերմացուներ և տնկանյութ, ովքեր են համարվում գյուղատնտեսական արտադրանք արտադրողներ:

**2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ**

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N 126-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	26 հունիսի, 2009թ, N 696-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №35(701), 15.07.2009թ.
Ուժի մեջ է	01 հունվարի, 2010թ.

**Համառոտ նկարագիր**

2010 թվականից անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման լ իցենզավորման կարգում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- ֆիզիկական անձը (անհատ ձեռնարկատերը) և իրավաբանական անձը լիցենզիա ստանալու համար պետք է ներկայացնեն նաև գործունեության համապատասխան վայրում հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված լինելու մասին հարկային մարմնի կողմից տրված տեղեկանքը,
- լիցենզիայի հայտը մերժվում է նախորդ օրացուցային տարվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառողի գործունեությունը 10 օրով կասեցված լինելու հանգամանքի հիման վրա,
- փորձաքննության իրականացման լիցենզավորման պահանջներում ու պայմաններում ավելացել

է նաև գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը:

Համապատասխան փոփոխություններ են կատարվել հայտի ձևում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 14-ի N 1902-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	26 հունիսի, 2009թ, N 697-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°35(701), 15.07.2009թ.
Ուժի մեջ է	01 հունվարի, 2010թ.

#### Համառոտ նկարագիր

Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզավորման կարգում կատարվել հետևյալ լրացումները.

- հայտատուն լիցենզիա ստանալու համար պետք է ներկայացնի նաև բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառքի լիցենզիայում նշված գործունեության համապատասխան վայրում հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված լինելու մասին հարկային մարմնի կողմից տրված տեղեկանքը,
- լիցենզիայի հայտը մերժվում է նախորդ օրացուցային տարվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառողի գործունեությունը 10 օրով կասեցված լինելու հանգամանքի հիման վրա,
- բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների խանութը պետք է ապահովված լինի նաև հսկիչ-դրամարկղային մեքենայով:

Համապատասխան փոփոխություններ են կատարվել հայտի ձևում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	24 հունիսի, 2009թ, N 686-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°33(699), 01.07.2009թ.
Ուժի մեջ է	01 հունվարի, 2010թ.

#### Համառոտ նկարագիր

ՀՀ-ում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգում կատարվել են հետևյալ փոփոխությունները. ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը լիցենզիա ստանալու նպատակով հայտարարված մրցույթին մասնակցելու համար 2010 թ.-ից ներկայացնելու են նաև գործունեության համապատասխան վայրում հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված լինելու մասին հարկային մարմնի կողմից տրված տեղեկանքը, լիցենզավորված անձինք գործունեության իրականացման վայրում պարտավոր են ունենալ հսկիչ-դրամարկղային մեքենաներ, լիցենզիայի հայտի մերժման հիմք է հանդիսանում նախորդ օրացուցային տարվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաները կիրառողների (լիցենզատուների) գործունեությունը 10 օրով կասեցված լինելու հանգամանքը:

### 3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

#### 3.1 Կառուցվածք և գործառույթներ

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից շարունակվել են քննարկումներ ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների գծով: Միաժամանակ դուրս է բերվել գործառույթների հաստատման հետ միաժամանակ՝ փաթեթային գծով առաջարկվող միջոցառումների ու հանձնարարականների ցանկ:

#### 3.2 Ծրագրեր և կատարողականություն

##### 3.2.1 Ծրագրեր և կատարողականություն /հարկային ծառայության մասով/

Համառոտագրի այս ժամանակահատվածի ընթացքում իրա կանացվել են հետևյալ աշխատանքները .

1. Հաշվետվությունները չներկայացրած հարկ վճարողների ցանկերի ձևավորման և տեսչության

համապատասխան բաժիններին դրանց տրամադրման կարգի մշակում, կիրարկում: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 30.06.09թ. N 1484-Ա հրամանով կանոնակարգվում է հարկային (տարածքային) տեսչությունում հաշվառված՝ հաշվետվություններ չներկայացրած հարկ վճարողների ցանկերի ձևավորման և տեսչության համապատասխան բաժիններին դրանց տրամադրման հետ կապված գործընթացը:

2. Կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու իրավապահ մարմիններին հայտնելու ընթացակարգեր: Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի փորձագետների օժանդակությամբ մշակված «Կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու իրավապահ մարմիններին հայտնելու ընթացակարգեր կանոնակարգող ուղեցույցի» կիրարկումն ապահովելու նպատակով 02.07.2009թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի N 1580-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի ստորաբաժանումների, ինչպես նաև տարածքային հարկային տեսչությունների հարկային ծառայողների հակակոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման գծով վերապատրաստման դասընթացների անցկացման ծրագիրը, մասնակիցների կազմը, անցկացման ժամանակացույցը:

### 3.2.2 Ծրագրեր և կատարողականություն/ մաքսային ծառայության մասով/

Համաշխարհային մաքսային կազմակերպության /ՀՄԿ/ «Կոլումբոս» ծրագրի շրջանակում 2009թ. հունիսի 2-րդ կեսին Երևանում են գտնվել ՀՄԿ երկու փորձագետ՝ «Ռազմավարական գործողությունների պլանավորում» թեմայով սեմինար անցկացնելու նպատակով: Սեմինարի ընթացքում կազմվել է ՀՀ մաքսային ոլորտի 2009-2012 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրի նախնական տարբերակը: Ռազմավարական գործողությունների պլանավորման ծրագրի համար հիմք են հանդիսացել ինչպես ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 14-ի թիվ 527-Ն որոշմամբ հաստատված Մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012 թվականների ծրագիրը, այնպես էլ մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները, մասնավորապես Համաշխարհային բանկի, «Գործարարությամբ զբաղվելը» ծրագրի, ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի և «Կոլումբոս» ծրագրի առաջին փուլի՝ դիագնոստիկ առաքելության առաջարկները, որն անց էր կացվել ՀՀ-ում 2009թ. հունվարի 19-30-ը: Նշված ծրագրում ներառվել են ինչպես վերոնշյալ փաստաթղթերի առաջարկները, այնպես էլ նախատեսվել են նոր միջոցառումներ, որոնք վերաբերում են մաքսային ծառայության տարբեր ոլորտներին և բացահայտվել են քննարկումների ընթացքում: Վերոնշյալ ծրագիրը ներկայումս գտնվում է շահագրգիռ գերատեսչությունների և այլ միջազգային կազմակերպությունների հետ քննարկման փուլում:

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 14-ի թիվ 527 որոշմամբ հաստատված ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012 թթ. ծրագրով նախատեսված «Եվրոպական Հանձնաժողովի «Օրինակելի մաքսային ծառայություն (Customs Blueprints)» ձեռնարկի հայերեն լեզվով հրատարակություն» միջոցառման աշխատանքներն ավարտվել են, մասնավորապես վերոնշյալ ձեռնարկի հայերեն տարբերակը բերվել է ավարտուն տեսքի և արդեն հրապարակվել է մաքսային ծառայության ինտերնետային կայքում «բարեփոխումներ, նախագծեր» բաժնում:

ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012 թթ. ծրագրով նախատեսված կարևոր միջոցառումներից է Վրաստանի հետ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի մաքսային սահմանին համատեղ մաքսային կետ ստեղծելու միջոցառումը: Ռազմավարությամբ նախատեսվում է այս միջոցառումը իրականացնել մինչև 2011 թվականի առաջին եռամսյակը և արդեն աշխատանքներ են սկսվել այդ ուղղությամբ, մասնավորապես, ինչպես մի շարք այլ հարցերի, այնպես էլ միացյալ մաքսային կետ ստեղծելու ուղղությամբ առավել կոնկրետ պայմանավորվածությոններ ձեռք բերելու նպատակով Վրաստանում է գտնվել նաև մաքսային ծառայության ներկայացուցիչներից բաղկացած հայկական խումբը: Քննարկումների արդյունքում երկու կողմերն էլ պայմանավորվել են սույն թվականի սեպտեմբերի առաջին տասնօրյակում հանդիպել հայ-վրացական սահմանային անցակետում /Բագրատաշենում/ ավելի կոնկրետ քննարկելու մաքսակետի ստեղծման տեխնիկական հարցերը՝ սկսած մաքսային օրենսդրության և ընթացակարգերի միասնականացումից մինչև շինարարական և այլ բնույթի աշխատանքներ:



### 3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.06.2009թ.-ից մինչև 20.07.2009թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ -ի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է ընդամենը թվով 10 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որ ի արդյունքում թվով 22 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.06.2009թ. -ից մինչև 21.07.2009թ. -ը քննարկվել է ընդամենը թվով 22 բողոք, որից.

- բավարարվել է 7 բողոք,
- կարճվել է 2 բողոք,
- մերժվել է 13 բողոք:

### 3.4 Միջազգային համագործակցություն

Սույն թվականի հունիսի 25-27-ը Եկատերինբուրգում տեղի ունեցավ ԱՊՀ անդամ-պետությունների հարկային ծառայության ղեկավարների համակարգող խորհրդի (ՀՕՂՀԽ) 16-րդ և ԵվրԱսՏՄ (ԱձԾԱՇԿՄՆ) մասնակից պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների խորհրդի 24-րդ հերթական նիստերը: Արդյունքում կայացվել են հետևյալ հիմնական որոշումները.

- ԱՊՀ անդամ պետություններում եկամուտների և գույքի կրկնակի հարկման բացառման ու հարկերի վճարելուց խուսափման համաձայնագրերի կիրառման և վարչարարության կանոնների վերաբերյալ ժողովածուի կազմման մասին,
- ԱՊՀ անդամ պետությունների հարկային համակարգերի հիմնական ցուցանիշների վերլուծություն կատարելու և ԱՊՀ անդամ-պետությունների տնտեսությունների վրա հարկային բեռի ցուցանիշների մասին,
- ԱՊՀ անդամ-պետությունների 2009թ. հարկային օրենսդրությունների փոփոխությունների մոնիտորինգի անցկացման մասին,
- Փոքր ձեռներեցության սուբյեկտների հարկման պարզեցված ռեժիմների կիրառման ցուցանիշների հաստատման մասին,
- ԱՊՀ անդամ-պետությունների ազգային օրենսդրություններում փոքր ձեռներեցության սուբյեկտների հարկման պարզեցված ռեժիմների փոփոխությունների մոնիտորինգի մասին,
- Հարկային ստուգումների իրականացման համար հարկ վճարողների ընտրության հա մակարգի հարկային ռիսկերի կիրառման մասին:

Ղազախստանի Հանրապետության հարկային ծառայության ղեկավարների հետ քննարկումներ են անցկացվել կապված հարկային ներկայացուցիչների ինստիտուտի, հատուկ հա շիվների էլեկտրոնային ձևերի ներդրման հետ: Նմանատիպ քննարկում է անցկացվել նաև Լատվիայի Հանրապետության հարկային ծառայության պետի տեղակալ տկն. Ն.Եզդակովայի հետ, որի ընթացքում փորձի փոխանակման կարգով ուսումնասիրվել են բարձրացված հարցերը: Ղազախստանի և լատվիական կողմերը պատրաստակամություն են հայտնել էլեկտրոնային փոստով կամ տեղում քննարկելու նպատակով հայկական կողմին տրամադրել իրենց հարկային օրենսդրությունում կիրառվող հատուկ հա շիվների և աուդիտի (ռիսկի) չափանիշների վերաբերյալ բոլոր գործող օրենսդրական նո րմերը: Այս հարցի շուրջ Լատվիայի ղեկավարության հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն անհրաժեշտության դեպքում հնարավորություն ստեղծել ՀՀ ԿԱ ՊԵԿ մասնագետների կողմից տեղում ուսումնասիրելու նրանց փորձը:

Նշված ժամանակահատվածում տեղի ունեցավ նաև ԵվրԱսՏՄ (ԱձԾԱՇԿՄՆ) մասնակից պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների խորհրդի 24-րդ նիստը: Այս կառույցին անդամակցում են Ռուսաստանի Դաշնությունը, Բելոռուսի, Ղազախստանի, Ղրղստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի Հանրապետությունները: Հայաստանը, Մոլդովան և Ուկրաինան ունեն դիտորդի կարգավիճակ:

Համաձայն «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի սույն թվականի հուլիս ամսին ՀՀ ԱԳՆ են ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Նիդեռլանդների Թագավորության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելգիայի Թագավորության կառավարության

րության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» և «ՀՀ կառավարության և Ավստրիայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագրերի լրամշակված նախագծերը՝ նիդեռլանդական, բելգիական և ավստրիական կողմերի քննարկմանը ներկայացնելու նպատակով:

ՀՀ վարչապետի 2009 թվականի հունիսի 24-ի թիվ 512 որոշման համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ պատվիրակությունը կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի գլխավորությամբ գործուղվել է Բրյուսել՝ Մաքսային համագործակցության խորհրդի /Համաշխարհային մաքսային կազմակերպության/ 113-րդ և 114-րդ նստաշրջաններին /25-27 հունիսի 2009թ./ մասնակցելու համար:

Նստաշրջանների ընթացքում քննարկվել են սահմանների համալիր կառավարման, «մեկ պատուհանի» սկզբունքի ներդրման, կեղծիքի և կեղծարարության դեմ պայքարի արդյունավետ միջոցների վերաբերյալ մի շարք հարցեր: Տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղարի, Նիդեռլանդների մաքսային ծառայության ղեկավարի, ինչպես նաև Իտալիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների մաքսային ծառայությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություններ կայացնող որոշ հարցեր: Հնչել են համապատասխան զեկույցներ նախորդ տարվա ընթացքում Համաշխարհային մաքսային կազմակերպության կոմիտեների, ենթակոմիտեների և հանձնաժողովների աշխատանքների վերաբերյալ, սահմանվել է 2009-2010 թվականների համար նախատեսվող աշխատանքների շրջանակը: Նիստերի ընթացքում տեղի են ունեցել նաև Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալի, նախագահողի և փոխնախագահողների, քաղաքականության հանձնաժողովի, ֆինանսական և վերահսկողության կոմիտեների անդամների ընտրությունները: Վերջնական ընտրությունների արդյունքում ՀՄԿ գլխավոր քարտուղարի տեղակալ է ընտրվել Զիլիի ներկայացուցիչ Սերժիո Մուլիկա Մոնտեալ: ՀՄԿ անդամ պետությունները /պատասխանատուները/, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը, համագործակցության արդյունքում առաջիկա տարիներին պետք է ձեռնամուխ լինեն համաշխարհային առևտրի խթանմանը: Այդ կապակցությամբ առաջարկվել է ՀՄԿ անդամ բոլոր այն պետություններին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանը, որոնք դեռևս չեն միացել Կիոտոյի վերանայված և Յոհաննեսբուրգի կոնվենցիաներին, քննարկել դրանց միանալու նպատակահարմարությունը: Այդ համատեքստում ներկայացվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից իրականացված նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն, քննարկվեցին այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են Կիոտոյի վերանայված կոնվենցիային միանալու համար: Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղարի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է նաև «Կոլումբոս» ծրագրի շրջանակներում ՀՀ-ում իրականացված դիագնոստիկ առաքելության արդյունքները, ձեռք են բերվել պայմանավորվածություններ ծրագրի շրջանակներում հետագա անելիքները որոշելու համար:

**3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում**

**Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային և մաքսային ծառայությունների մասով/**

2009 թ. հուլիսի 17-ին կայացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության թափ ուր պաշտոնների համալրման նպատակով հերթական մրցույթը, որին մասնակցելու և դիմում էին ներկայացրել 180 քաղաքացիներ: Մրցույթի արդյունքում համալրվել է հարկային ծառայության 37 թափուր պաշտոն:

Հարկային ծառայության թափուր պաշտոնների համար հերթա կան մրցույթը կայանալու է 2009 թ-ի սեպտեմբերի 8-ին, որի վերաբերյալ հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և տեղադրվել է [www.taxservice.am](http://www.taxservice.am) ինտերնետային կայքում:

2009թ.-ի հուլիսի 16-ին կայացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության 20 թափուր պաշտոնների համալրման նպատակով հերթական մրցույթը, որում հաղթող են ճանաչվել 19 մասնակիցներ:

2009թ.-ի հունիսի 21-ից հուլիսի 20-ն ընկած ժամանակահատվածում ծառայողական քննություն չի անկացվել:

**3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն**

**3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /հարկային ծառայության մասով/**

ՀՀ ԿԱ ՊԵԿ 2009թ. հուլիս ամսին ՏԹԵՃ գծով՝ ստացվել է 215 բողոք և առաջարկություն: Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզևավճարների տրամադրման նոր կարգին, պայմաններին,

ժամկետներին, ՏՀՏ-ներում գոյացած հերթերին, ՏՀսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին՝ ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին, կայացած վիճակահանությանը, շահած կտրոններին, ինչպես նաև վիճակահանությանն առնչվող բազմաթիվ այլ հարցերի: Առաջարկությունները հիմնականում վերաբերել են պարզևավճարների տրամադրման նոր կարգին և պայմաններին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել են հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են ՏՀՏ-ների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

**3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/**

Հունիսի 20-ից մինչև հուլիսի 20-ը «Թեժ գծով» ստացվել է 350-400 զանգ: Զանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվություն: Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 5 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, ավտոմեքենաների մաքսազերծմանը, ինչպես նաև արտերկրից ուղարկված ծանրոցների մաքսազերծման հետ կապված խնդիրներին: Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքվացուն կամ զանգահարել և պարզաբանում է տրվել խնդրի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով: Հունիսի 20-ից մինչև հուլիսի 20-ն արձանագրված բողոքներից մեկը ընթացքի մեջ է: Մնացած բոլորին արձագանքվել է:

**3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր**

**3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր**

3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշը	2008թ.		2009թ.		Աճը, 2009/2008	
		հունվար- հունիս, մլն դրամ	հունիս, մլն դրամ	հունվար- հունիս, մլն դրամ	հունիս, մլն դրամ	հունվար- հունիս, %	հունիս, %
1	Մաքսային մարմնի կողմից պե տա- կան բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, մլն դրամ	120 960	20 115	97 562	18 505	80.7	92.0
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջա- նառությունը, մլն դրամ	754 676	136 390	605 193	133 620	80.2	98.0
	արտահանում, մլն դրամ	159 745	30 042	112 972	26 581	70.7	88.5
	ներմուծում, մլն դրամ	594 930	106 348	492 222	107 039	82.7	100.6
3	Արտաքին տնտեսական գործու- նեության մասնակիցների թիվը (տնտեսվարող սուբյեկտներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք)	18 522	4 723	12 813	3 056	69.2	64.7